Պարույր Սևակ

Անպաշտոն գիշերապահը

Եթե լինեի ես գիշերապահ,
Ո՛չ մի գողություն չէր էլ կատարվի:
Հանգիստ կքներ ամեն տուն ու բակ
Հին «նանիկ»-ի տակ նորամայր առվի:
Եվ խանութների ցուցափեղկերում
Բազում-բազմազան իր ու առարկա
Ի՛նձ ցույց կտային և հեռվից-հեռու
Աչքով կանեին մեկ-մեկու. «Եկա՛վ»:
Եվ գործ կածեինք մենք ամբողջ գիշեր
Խաղալիքների լեզուն անհոլով:
Մութը մոռացված բաներ կհուշեր,
Ու կկապեինք մենք հինը նորով:
Հարցեր կտային հազար մի տեսակ
Անհասկանալի մեր մարդկայինից՝
Ադամ-արբանյակ-ատոմ-կայենից,
Եվ նրանց «ինչո՞ւ»-ն, նրանց «մի՞թե սա»-ն
Խեղճիս կդներ ճիշտ այն վիճակում,
Ինչ լույսն է զգում ծակուռ-փչակում:
Բայց հետո քամին կգար օգնության,
Ու խոսք կբացվեր խոտից ու ծառից:
Եվ թավշե արջուկն առանց հոգնության

Կսկսեր պատմել թղթե անտառից:
Ու նապաստակներ ռետինակաշի՝
Օդանավերի թևերին պպզած,
Կխլշտեին ականջները ժիր
Ու կլսեին մանկորեն ապշած:
Հետո... կանացի լաչակներ պես-պես,
Զգեստներ գունեղ, նրբին կոշիկներ
Կսարքեին մի ճոխ պարահանդես,
Որից փակուղու մութն էլ կշիկներ:
Եվ մութն իսկապես մաշվում է-մաշվում,
Լույսը դառնում է խավարին դրկից...
.....
Կիսամերկ մի կին հինգերորդ հարկից
Նկատում է ինձ ու ետ է քաշվում:
Իսկ նա կհիշի՞ անկողնում իր տաք
Այն տարօրինակ միայնակ մարդուն,
Որ ման է գալիս այս պատերի տակ
Եվ այս ուշ ժամին տակավին արթուն՝
Խաղալիքների լեզվով անհոլով
Հարցեր է լուծում համաշխարհային,
Կանանց անմարմին հագուստ ու շորով
Սարքում է շքեղ հանդես պարային՝
Այն ապակեպատ թղթե անտառում,
Որտեղ թավշամաշկ արջուկն է ճառում՝
Հետն էլ լիզելով թաթն իր անմեղը...
.....
Թե գողություն է կատարվել երեկ՝
Ի՛նձ ինչ. պահակ չեմ, ուրեմն՝ անմեղ եմ...

24.X.1962թ.

Երևան